ԱՐՄԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԱՐԴԻ ՀԱՅ ԹԱՏԵՐԱԿԱՆ ԿՅԱՆՔԻ ՍՈՑԻՈԼՈԳԻԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՄԱՆ ՓՈՐՁ

Մեր օրերում թատերական արվեստը կորցրել է իր հասարակական դերն ու նշանակությունը: Հնարավոր է, որ թատերական կյանքի զարկերակի թուլացումը մեր հանրապետությունում պայմանավորված է վերջին տասնամյակում ստեղծված իրավիճակով:

Այս և բազմաթիվ այլ հարցերի պատասխանը կտա հասարակության, թատերական արվեստի ինստիտուտի ուսանողության և թատրոնի մարդկանց կարծիքների հավաքագրումն ու հետազոտումը: Ընկերաբանական /սոցիոլոգիական/ հարցման տվյալ փորձը հնարավորություն կտա ճշտել թատրոնի իրական վիճակը արդի հայ հասարակական կյանքում, որոշել թատերական արվեստի անհրաժեշտությունը, հեռանկարները, հասարակության և մասնագետների կարծիքն ու վերաբերմունքը ներկայիս հայ թատրոնի նկատմամբ: Նաև պատկերացում կկազմենք Երևանի թատրոնների հանդիսատեսի կազմի մասին:

Հարցման արդյունքները հնարավորին չափով ճշգրիտ ներկայացնելու համար կազմվել է երեք տեսակ հարցաթերթիկ՝ հասարակության, թատրոնում աշխատող մարդկանց /այսուհետև՝ թատրոնի մարդիկ/ և թատերական արվեստի ինստիտուտի ուսանողության /այսուհետև՝ ուսանողներ/ համար: Հարցմանը մասնակցել է համապատասխանաբար 200 և 100-ական, ընդհանուր առմամբ՝ 400 մարդ: Ընդ որում, հարցաթերթիկներում տեղ գտած հարցերից առաջին յոթը ընդհանուր են, ինչը հնարավորություն է տալիս ներկայացնել ինչպես առանձին խմբերի, այնպես էլ ընդհանուր արդյունքները: Հարցումն անցկացվել է 1999-2000 ուսումնական տարվա ընթացքում:

Անհրաժե՞շտ է արդյոք թատրոնը մեր իրականության մեջ: Թվում է, թե առանց որևէ կասկածանքի, միանշանակ կարելի է ասել՝ այո, իհարկե: Եվ այդպես է: Այլ հարց է, թե կա՞ արդյոք թատրոնի հասարակական անհրաժեշտությունն այսօր:

Ըստ հարցման արդյունքների, մեզանում կարևորվում է թատրոնի անհրաժեշտությունը: Ընդհանուր թվից 87,75%-ը դրական է պատասխանել այս հարցին, իսկ հասարակության ներկայացուցիչների՝ 84,5%-ը: Բայց որքանո՞վ է արդարացվում այս կարծիքը, եթե հարցմանը մասնակցած հասարակության 2%-ն է մշտապես դիտում բոլոր նոր ներկայացումները: Այս թիվը հասնում է ընդամենը 10,5%-ի, երբ հաշվում ենք նաև թատրոնի մարդկանց և ուսանողների կարծիքները: Հասարակության 7%-ը, որ կասկած է հայտնել մեր իրականության մեջ թատրոնի անհրաժեշտության խնդրում, առավել անկեղծ է: Դրան ապացույց՝ 56% մարդիկ, որոնք թատրոն են հաճախում, երբ ազատ ժամանակ են ունենում: Այս թիվը ցույց է տալիս ոչ միայն թատրոնին կարևորություն չտալու, այլև այն երկրորդական, եթե ոչ երրորդական երևույթ համարելու փաստը: Կան նաև մարդիկ, ովքեր գտնում են, որ մեզ թատրոն պետք չէ: Այս կարծիքն են հայտնել հարցման մասնակիցների 8,5%-ը: Բարեբախտաբար, թատրոնի մարդկանց և ուսանողների մասնագիտական վերաբերմունքը ընդհանուր հաշվարկում այս թիվը հասցնում է 4,5%-ի: Տրամաբանական է, որ և թատրոնի մարդիկ /91%/ և ուսանողները /91%/ վստահ են թատրոնի անհրաժեշտության հարցում, այն տարբերությամբ, որ ուսանողներն առավել լավատես են: Նրանք գրեթե միաձայն են այս հարցում: Թատրոնի որոշ գործիչներ /1%/ կարծում են, որ թատրոնը մեր իրականության մեջ անհրաժեշտ չէ: Հարց է ծագում, թե հնարավո՞ր է աշխատել, առավել ևս, նվիրվել որևէ գործի, որի անհրաժեշտության մեջ վստահ չես: Գուցե նման մարդիկ էլ դառնում են /և ոչ միայն թատրոնում/ գործի անհաջողության «գրավականը»:

Այնուամենայնիվ, թատրոնները կան և ունեն հանդիսատես, թեև փոքրաթիվ: Հասարակության 56%-ը թատրոն է հաճախում, երբ ազատ ժամանակ ունի: Սրանց միանում են նաև 6% այն մարդկանց թվից, որոնք մասնագիտության բերումով երբեմն դիտում են ներկայացումներ: Այս

հարցում ակտիվ են ուսանողները, որոնց 20%-ը ներկա է լինում բոլոր պրեմիերաներին /հատկապես առաջին և երկրորդ կուրսերում/, իսկ 61%-ը, ընտրած մասնագիտության բերումով, հաճախ է դիտում ներկայացումներ: Թատրոնի մարդիկ նույնպես մասնակից են քաղաքի թատերական կյանքին: 18%-ը մշտապես դիտում է պրեմիերաները, իսկ 51%-ը զուտ մասնագիտական հետաքրքրությամբ է դիտում այլ թատրոններում կոլեգաների աշխատանքը: Ընդամենը 5%-ը ցանկություն չունի հանդիսատեսի կարգավիճակով հանդես գալ թատրոնում՝ մեկնաբանելով, որ ոչ մի հետաքրքիր բան չի ակնկալում: Հասարակության 36%-ը նույնպես թատրոն չի հաճախում: Երիտասարդները կինոն և, հիմնականում, հեռուստատեսությունը համարում են ավելի հետաքրքիր, հարմար և մատչելի: Ավագ սերունդը, ճնշված կենցաղային հոգսերով, ժամանակ չի գտնում թատրոն հաճախելու համար: Մեծահասակները, համեմատելով իրենց իմացած և տեսած թատրոնն այսօրվա ներկայացումների հետ, չեն ուզում մասնակից դառնալ «գորշ», անհետաքրքիր թատերական ներկայացմանը՝ համարելով այն ոչ գեղագիտական, ոչ էլ բարոյական: Հարցման մասնակիցների ընդհանուր թվից 20%-ն ընդհանրապես թատրոններ չի հաճախում:

Այժմ այս ամենը փորձենք մեկնաբանել այլ տեսանկյունից: Ինչպե՞ս է գնահատում հանդիսատեսը ներկայիս հայ թատերական արվեստը: Ընդհանուր առմամբ բավարար /57,5%/, բայց գերակշռում է բացասական վերաբերմունքը: Նրանք, ովքեր այսօրվա թատերական արվեստը գնահատել են «անբավարար» /24%/ վեց անգամ շատ են, քան թատրոնն անթերի համարող՝ մարդիկ /4%/: Այլ կերպ են տեսնում դրությունը հենց իրենք՝ թատրոնի մարդիկ, որոնցից յուրաքանչյուր երկրորդը /50%/ «բավարար» է գնահատում թատերական արվեստը հայ իրականության մեջ: Թատրոնի մասնագետների 26%-ը «լավ» է գնահատում այսօրվա թատերական արվեստը՝ ավելացնելով, որ ընդհանուր խավարի մեջ ունենք նաև հետաքրքիր ներկայացումներ:

Ներկայիս հայ թատրոնը «գերազանց» և «անբավարար» գնահատողների թիվը հավասար է /12% և 12%/: Ուսանողները ուշադիր և զգուշությամբ են վերաբերվում այս հարցին՝ չդասելով իրենց սովորական

հանդիսատեսի շարքին, բայց առայժմ՝ ոչ էլ բեմին: Ուստի նրանց թիվը, ովքեր թատրոնն անթերի են համարում, հավասար է հանդիսատեսի նույն հարցին տված պատասխանի թվին՝ 4%: Ուսանողները ևս բավարար են համարում ներկայիս թատրոնի ստեղծագործությունը /45%/: Նրանց 17%-ը /հիմնականում երրորդ, չորրորդ, հինգերորդ կուրսերը/ բավարարված չէ տեսած ներկայացումներով, իսկ 34%-ը /հիմնականում առաջին և երկրորդ կուրսերը/, որոնք առավել հաճախ են թատրոններ հաճախում, մեծ զգուշությամբ իրենց տեսած ներկայացումները հետաքրքիր են համարում: Ամփոփելով արդյունքները, ստանում ենք հետևյալ պատկերը. «գերազանց»՝ 6%, «լավ»՝ 22,25%, «բավարար»՝ 52,5%, «անբավարար»՝ 19,25%:

Ի՞նչ ֆունկցիա ունի թատրոնն այսօր: Այս է հաջորդ հարցը, որին պետք է պատասխան գտնել: Հարցման մասնակիցների 38,75%-ը գտնում՝ է, որ թատրոնը որևէ կոնկրետ ֆունկցիա կատարելու խնդիր չունի, քանի որ թատրոնի նպատակն իր մեջ է: Այս կարծիքն է հայտնում հասարակության 33%-ը և թատրոնի մարդկանց 38%-ը: Հարցմանը մասնակցած ուսանողների կեսից ավելին՝ 51%-ը նույնպես համամիտ է այս տեսակետին: Օրինաչափ է ուսանողության նման վերաբերմունքը: Պատճառը թերևս այն է, որ թատերական արվեստի ինստիտուտում տեսականորեն կարևորություն է տրվում առավելապես թատրոնի գեղարվեստական նպատակին և պակաս հասարակական դերին:

Հանդիսատեսի 10,5%-ը և ուսանողների 11%-ը կարծում է, որ այսօր թատրոնը կատարում է հասարակական-քաղաքական ֆունկցիա: Թատրոնի մարդիկ գտնում են, որ մեր օրերում թատրոնը նախ և առաջ կարևորվում է իր կրթա-մշակութային /34%/ և բարոյա-դաստիարակչական /19%/ դերով, իսկ հասարակական-քաղաքականը /4%/ երկրորդական է: Թեև, ինչպես ցույց է տալիս պատմությունը, քաղաքականության միջամտությունը թատրոնում միշտ չէ, որ ցանկալի չէ, և երբեմն քարոզչական արվեստն էլ է ստեղծում մշակութային արժեքներ:[2]

Հասարակությունը ևս կարևորում է թատրոնի կրթա-մշակութային /31%/ և բարոյա-դաստիարակչական /24,5%/ դերը: Իսկ ուսանողները, նախապատվություն տալով «թատրոնի նպատակն իր մեջ է» տեսակետին,

գտնում են, որ այսօրվա թատրոնի ֆունկցիան հնարավոր չէ որոշել որպես կրթա-մշակութային /19%/ կամ բարոյա-դաստիարակչական /14%/, քանի որ փաստացիորեն այդպես չէ: Այս ամենին հակադրվում է հարցմանը մասնակցած մարդկանց ընդհանուր թվից 3%-ը, որոնք պնդում են, թե այսօրվա թատրոնը հայ իրականության մեջ ինքնանպատակ է և հասարակական կյանքում բացարձակապես ոչ մի ֆունկցիա չի կատարում:

Ո՞րն է թատրոնի գոյության որոշիչ տարրը: Մաքսիմիլիան Վոլոշինը գտնում է, որ «դերասանը, պոետն ու հանդիսատեսն այն երեք հիմնական տարրերի շոշափելի դիմակներն են, որոնք ստեղծում են յուրաքանչյուր արվեստի գործ»:[3] Հարցման մասնակիցների ընդհանուր թվից 32%-ը թատրոնի որոշիչ տարր է համարում դերասանին, ընդամենը 2,75%-ը՝ հեղինակին /դրամատուրգին/ և 20,75%-ը՝ հանդիսատեսին: 5%-ը կարևորում է «դերասան-հեղինակ-հանդիսատես» երրորդությունը:

Հանդիսատեսին հավասար կարևորություն է տրվում ռեժիսորին /20%/: Մինչդեռ ռեժիսորական արվեստը որպես այդպիսին ձևավորվել է միայն 19-րդ դարում: Բայց չէ՞ որ թատրոնն աշխարհում ավելի քան երկուս ու կես հազար տարվա պատմություն ունի: Թատրոնը գործել է, և չի եղել ռեժիսոր այն իմաստով, ինչ պատկերացվում է ժամանակակից թատրոնում: Խոսելով թատրոնում ռեժիսորի անհրաժեշտության մասին՝ Վոլոշինը նշում է, որ ռեժիսորը «համախմբում է թատրոնի երրորդությունը: Ուստի թատրոնի ծաղկման շրջանում ռեժիսորը չի երևում, չի զգացվում և աներևույթ է: Բայց երբ հանդիսատեսի, դերասանի և հեղինակի միջև անհամաձայնություն է ծնվում, նա միանգամից ի հայտ է գալիս, քանի որ պատասխանատու է թատրոնի կյանքում ուժերի հավասարության համար և պետք է լրացնի այն, ինչը պակասում է տվյալ պահին: Ժամանակակից ռեժիսորների նյարդայնությունը, հնարամտությունը և տաղանդը խոսում են թատրոնի աններդաշնակության մասին»:[4]

Թատրոնի մասնագետները կարևորում են ռեժիսորի արվեստը /22%/: Սա ապացուցում է, որ ներկայիս թատրոնի «երրորդությունը»՝ դերասանը, հեղինակն ու հանդիսատեսն անհամերաշխ են:

Թատրոնի մարդիկ դերասանին նույնպես համարելով թատրոնի որոշիչ տարրերից /29%/ ոչ մի նշանակություն չեն տալիս հեղինակին /դրամատուրգին/: Զարմանալի է, բայց հեղինակին կարևորել են միայն այն դեպքում, երբ կարծիք են հայտնել, որ թատրոնն անհնար է առանց նշված բաղադրատարրերից որևէ մեկի՝ դերասանի, ռեժիսորի, հանդիսատեսի, ի վերջո՝ դրամատուրգի /13%/:Ուսանողների 26%-ը թատրոնում դերասանին է տալիս որոշիչ դերը, կիսով չափ՝ 13%-ը ռեժիսորին: Եվ նորից ոչ ոք չի առանձնացնում հեղինակին: Դրամատուրգը կարևորվում է միայն այն դեպքում, երբ նշվել են նաև դերասանը, ռեժիսորը, հանդիսատեսը: Ուսանողների 22%-ը կարծում է, որ թատրոնն անհնար է առանց այս քառյակի: Հետաքրքիր է հիշել, որ «19-րդ դարի թատրոնը դերասանական է և գրական. դերասանն ու թատերագիրն այստեղ հանդես են գալիս որպես բեմական մտածողությունը հատկանշող ուժեր: Բեմադրիչը երկրորդական դեմք է...»:[5]

Այլ կերպ է պատկերացնում թատերական աշխարհի իրավիճակը հասարակությունը, որը թատրոնի որոշիչ տարր է համարում և դերասանին /36.5%/, և ռեժիսորին /22,5%/,և հեղինակին /5,5%/, թերագնահատելով իր՝ հանդիսատեսի դերը: Այն դեպքում, երբ թատրոնի մարդկանց 20%-ն ու ուսանողների 24%-ը հանդիսատեսին է տալիս նախապատվությունը, հասարակության 19,5%-ն է կարծում, որ ինքն անհրաժեշտ է թատերական ներկայացման ժամանակ:

Եվս մեկ ցուցանիշ՝ հասարակության 5,5%-ը կարծում է, որ թատրոնում որոշիչ է «դերասան-ռեժիսոր» միասնությունը:Նորից մեծ տեղ է տրվում ռեժիսորի գործունեությանը: Փաստորեն, ակնհայտ է թատրոնի աններդաշնակությունը: «Այն, որ դերասանները մոռացել են խաղալ, իսկ դրամատուրգները՝ գրել, ևս մեկ անգամ հուշում է, որ պատճառը պետք է փնտրել հանդիսատեսի հոգու մեջ», - գրել է Վոլոշինը:[6]

II

Ընկերաբանական հարցման այս փորձի նպատակն է պարզել նաև երևանյան հանդիսատեսի կազմը՝ տարիքը, կրթությունը և այլն: Քանի որ թատրոնում հանդիսատեսին կարևորություն ենք տալիս, տեսնենք, թե ումից է

բաղկացած Երևանում թատերական ներկայացման լսարանը:Տարիքային խմբերը հետևյալն են.

տասնութից քսանհինգ տարեկան 22%,
քսանվեցից երեսունինը տարեկան 25%,
քառասունից հիսունինը տարեկան 34,5%,
վաթսուն տարեկան և բարձր 18,5%:

Մինչև տասնյոթ տարեկան դպրոցական տարիքի համար նախատեսված հարցաթերթիկները աշխատանքի ընթացքում կորցրեցին իրենց նշանակությունն ու իմաստը: Դպրոցականների հետ բազմաթիվ զրույցների ընթացքում պարզվեց, որ շատերը բավականին աղոտ պատկերացում ունեն թատրոնի մասին, ոմանք էլ ոչ մի անգամ թատրոն չեն հաճախել:

Թվում է, կրթությանը մեզանում մեծ նշանակություն է տրվում: Ավելի ստույգ, կրթությանը մեծ նշանակություն էր տրվում: Մեր հետազոտման արդյունքները ցույց են տալիս, որ հարցմանը մասնակցած երևանցիների 63,5%-ն ունի բարձրագույն կրթություն, 16,5%-ը՝ թերի բարձրագույն, 10,5%-ը՝ միջնակարգ մասնագիտական, 9%-ը՝ միջնակարգ, ընդամենը 0,5%-ը՝ թերի միջնակարգ կրթություն: Սակայն այսօր վիճակն այլ է: Մեջբերում եմ քաղաքային կրթության վարչության տվյալները. «1968 թվին առաջին դասարանցիների թիվը հավասար էր 73 428-ի, իսկ տասը տարի անց՝ 1978-ին դպրոցն ավարտել են 57200 մարդ /տարբերությունը՝ 16228/: 1978 թվին առաջին անգամ առաջին դասարան են գնացել 58 730 երեխա, 1987-ի միջնակարգ կրթության վկայական են ստացել 40900-ը: Այդ տարիներին հարգի էին տեխնիկումներն ու ուսումնարանները: Արդեն մեր օրերում՝ 1986 թվին առաջին դասարանցիների թիվը հասնում էր 71130-ի, բայց տասը տարի անց՝ 1996 թվին դպրոցն ավարտեցին ընդամենը 37476 երեխա /տարբերությունը՝ 33 654/: Մոտ 33 հազար երեխա չի ավարտել միջնակարգ դպրոցը նաև 1997-1998 ուսումնական տարում»:[7]

Ակնհայտ է, որ այս ամենը վերջին 10-15 տարիների ընթացքում հանրապետությունում ստեղծված քաոսային վիճակի արդյունքն է: Այս պայմաններում մասնավորապես պետք է կարևորել արվեստի դերը

հասարակական մշակութային կյանքում, արվեստի օգնությամբ կարգավորել մարդուն, մարդկային փոխհարաբերությունները, հասարակության նոր արժեքների ձևավորումը:

Ճշտենք, թե ի՞նչ զբաղմունքի տեր են կամ ո՞ր սոցիալական խմբին են պատկանում հարցման մասնակիցները և որքա՞ն է նրանց ամսական միջին եկամուտը: Արդյունքների ամփոփումը կպարզի, թե արդյոք հասարակության սոցիալական վիճակը կապ ունի՞ թատերական կյանքի ակտիվացման կամ պասսիվացման հետ:

Հարցման մասնակիցների ընդամենը 2,5%-ն է կազմում բանվորների դասը, մեր օրերում բավականին հետաքրքիր ցուցանիշ: Բնականաբար մեծ է գործազուրկների թիվը՝ 9,5%, իսկ թոշակառուները կազմում են 7,5%: Հարցմանը մասնակցել են նաև ուսանողները /ոչ թատերական արվեստի ինստիտուտի/՝ 13% և իրենց գործարար համարող մարդիկ՝ 11%: Մեծ թիվ է կազմում մտավորականների խավը՝ 28%: Բարեբախտաբար կամ դժբախտաբար, հարցմանը մասնակցած մարդկանց ևս 28,5%-ը պետական ծառայողներ են:

Տպավորիչ է միջին ամսական եկամուտի մասին տվյալների ամփոփումը:

Այսպես՝

մինչև 10 հազար դրամ ամսական եկամուտ ունի	40,5%-ը,
10-ից 25 հազար դրամ՝	20,5%-ը,
25-ից 50 հազար դրամ՝	22%-ը,
50-ից 100 հազար դրամ՝	15%-ը,
100-ից 250 հազար դրամ՝	1%-ը,
250 հազար դրամ և ավելի՝	1%-ը:

Ակնհայտ է հասարակության սոցիալական ծայրահեղ շերտավորումը:

Այնուամենայնիվ, ինչպես ցույց են տալիս հարցման արդյունքները, այսօր երևանցուն հիմնականում մատչելի է թատրոնների տոմսերի արժեքը: 57,5%-ը չի կարծում, որ թատրոնների տոմսերը թանկ են: 30%-ը դժգոհ է տոմսերի արժեքից, թատրոնի տոմսը նրանց մատչելի չէ: Այս մարդիկ միշտ չէ, որ թատրոն են հաճախում, թեև ունեն ցանկություն: Նրանք, ում

մատչելի է թատրոնների տոմսերի արժեքը, տարբեր պատճառներով թատրոն հաճախելու համար ժամանակ չեն գտնում կամ հազվադեպ են ներկայացումներ դիտում: Կան նաև մարդիկ, ովքեր առավելապես օգտվում են հրավիրատոմսերից 12,5%-ը:

Փաստորեն, թատերական արվեստն անհրաժեշտ համարելով, երևանցին հիմնականում թատրոն չի հաճախում: Անկասկած, հասարակության սոցիալական վիճակը որոշակի դեր ունի այստեղ:

Պարզենք այժմ, թե ո՞ր թատրոնն է նախընտրում երևանյան հանդիսատեսը: Կարելի է փաստել, որ երևանցիների սիրած թատրոնն է Հրաչյա Ղափլանյանի անվան պետական դրամատիկական թատրոնը, որ գործում է կանոնավոր, ունի ոչ մեծ դահլիճ և մշտական հանդիսատես: Թատրոնի շենքը գտնվում է քաղաքի կենտրոնի ամենամարդաշատ վայրում:երկու տարի չգործած Սունդուկյանի անվան պետական ակադեմիական թատրոնի լսարանի համար այն դարձել էր յուրօրինակ այլընտրանք: Այժմ թատրոնը տարբեր միջոցներով հանդիսատես է գրավում, այդ թվում՝ գովազդ օգտագործելով: Միգուցե գործի ճիշտ կազմակերպման հետևանքն է այն, որ ունենք այսօր: Հարցման մասնակիցների 33%-ը նախընտրում է Երևանի պետական դրամատիկական թատրոնը:

Սունդուկյանի անվան պետական ակադեմիական թատրոնը զիջում է անգամ երաժշտական կոմեդիայի թատրոնին, որի օգտին քվեարկել է հասարության 20%-ը: Այլ թատրոնների համեմատ, Հակոբ Պարոնյանի անվան երաժշտական կոմեդիայի թատրոնն ունի ավելի շատ և հիմնականում իր մշտական հանդիսատեսը: Այստեղ գալիս են հանգստանալու և ժամանցի նպատակով, կամ նրանք, ովքեր պարզապես սիրում են գնալ թատրոն: Ասել է թե՝ հաճելին ուզում են համատեղել օգտակարի՝ ծիծաղի հետ:

Երրորդը, ըստ ռեյտինգի, վերջապես այսպես կոչված Մայր թատրոնն է՝ Սունդուկյանի անվան պետական ակադեմիականը /15%/: Անբացատրելի է, թե ինչպե՞ս կարող է Մայր թատրոնը երրորդը լինել: Վերջին տարիներին ստեղծվեց նոր խաղացանկ, թատրոնի համակարգում տեղի ունեցան փոփոխություններ: Բայց թատրոնն իր համարումը չկարողացավ

վերականգնել և դա դժվար է լինելու: Նախ անհրաժեշտ է վերակառուցել թատրոնի շենքը, որի տեսքն ու շրջակայքը բնավ չեն տրամադրում, հետո միայն զբաղվել ստեղծագործական հարցերով: «Կոմայգին» նախկինում երևանցիների սիրված զբոսայգին էր և ամեն երեկո այստեղ մարդաշատ էր: Այսօր «Անգլիական այգին» դարձել է անօթևան մարդկանց, թափառող շների ապաստարան:

Ստանիսլավսկու անվան ռուսական դրամատիկական թատրոնը նախընտրում է հարցման մասնակիցների 13,5%-ը, հիմնականում ռուսախոս բնակչությունը:

Պատանի հանդիսատեսի թատրոնը նախընտրում է հարցմանը մասնակցած հասարակության 2%-ը:

Հասարակության 6%-ը, նախապատվություն չտալով վերը նշված որևէ թատրոնի, կարծում է, որ հետաքրքիր են այլ պրոֆեսիոնալ թատրոնների ներկայացումները: Հիմնականում նշվում են «Համազգայինի», «Մետրո» և Մնջախաղի պետական թատրոնները:

Իսկ ի՞նչ նպատակով է հանդիսատեսը թատրոն հաճախում: Պարզվում է, որ հասարակության 29%-ը թատրոն է հաճախում, որովհետև նրա համար հետաքրքիր է թատերական արվեստը: 8,5%-ի նպատակն է տեսնել իրենց սիրած և հանրածանոթ դերասաններին: Եվս 4,5%-ը թատրոն է գնում,որպեսզի վերհիշի պիեսն ու այն համեմատի բեմադրության հետ: Թատրոն են հաճախում հանգստանալու և ժամանցի նպատակով /26,5%/:Կան նաև մարդիկ, ովքեր պարզապես սիրում են գնալ թատրոն /21,5%/: Ամենազարմանալին այն է, որ թատրոնի շենքը երբեմն ուղղակի ժամադրավայր է: 5%-ը խոստովանել է, թե թատրոն գնալու իմաստն այն է, որ ճեմասրահում հանդիպում է ընկերներին, ծանոթներին: 5%-ը դժվարացել է պատասխանել այս հարցին:

III

Ինչպես արդեն պարզել ենք, թատրոնում աշխատող ստեղծագործական անձնակազմի ընդամենը 20%-ն է հանդիսատեսին համարում թատրոնից անբաժան, նրա գոյությունը պայմանավորող տարր: Իսկ

ի՞նչ նշանակություն են տալիս թատրոնի մարդիկ հանդիսատեսին կոնկրետ ներկայացումների ժամանակ: Հարցման մասնակիցների 73%-ը ցանկանում է, որ դահլիճը ներկայացման ժամանակ լեփ-լեցուն լինի. չէ՞ որ ամեն ինչ նախատեսված է հանդիսատեսի համար: Այսօր դահլիճները լեփ-լեցուն են լավագույն դեպքում պրեմիերայի առաջին և հաջորդ երկու ներկայացումների ժամանակ, նաև այն դեպքում, երբ Երևանում հանդես են գալիս այցելու, մասնավորապես ռուսական, թատերախմբերը: Երևանում հյուրախաղային ներկայացումների տոմսերը արագ վաճառվում են, թեև ավելի թանկ են: Հանդիսատեսը չի տեսնում տեղական թատրոններում այն, ինչ ակնկալում է: Այսինքն թատերական կյանքի պասսիվացումը բացատրվում է ոչ միայն հասարակության սոցիալական վիճակով, այլև, անկասկած, թատերական ներկայացումների որակով:

Թատրոնի մարդկանց 26%-ն այն մտքին է, որ ներկայացման ժամանակ դահլիճում հանդիսատեսի թիվը կարևոր չէ: Հավանաբար սրանք այն մարդիկ են, որոնք խաղալով հիմնականում կիսադատարկ դահլիճների առջև, համակերպվել են այսօրվա իրավիճակին:

1%-ը վստահ է, որ թատերական ներկայացման ժամանակ հանդիսատես կարող է և չլինել:

Հայ արտիստը թատրոնը համարում է իր հիմնական և մշտական մասնագիտությունը: Այս մտքին է թատրոնի մարդկանց 87%-ը: Հաշվի առնելով այն պայմանները, որում ապրում և աշխատում են ստեղծագործողները, նրանց համառությունը զարմանալի է և գովելի: Մնացած 13%-ն այլ կարծիք ունի, այսինքն՝ թատրոնը չի համարում իր հիմնական աշխատանքը: Ինչ՞ով են նման մարդիկ զբաղվում թատրոնում, պարզ չէ, բայց անհնար է, որ ստեղծագործեն:

Հաջորդ հարցը. արդյոք կա՞ այսօր Երևանի թատերական արվեստի ինստիտուտի անհրաժեշտությունը:

Ըստ հարցման մասնակից թատրոնի մասնագետների, Հայաստանում կա թատերական արվեստի պետական ինստիտուտի անհրաժեշտությունը: 27%-ի կարծիքով այն պատրաստում է բավարար որակի մասնագետներ: Թատրոնի մարդկանց 9%-ը դեմ չէ թատերական կրթությանը, բայց

առաջարկում է այն կազմակերպել այլ կերպ՝ ոչ որպես թատերական ինստիտուտ, այլ որպես առանձին բաժին համալսարանում կամ կոնսերվատորիայում: Հարցման մասնակիցների 7%-ը կարծում է, որ թատերական արվեստի ինստիտուտը պետք չէ: Եթե հաշվի առնենք, որ թատրոնի մասնագետների 19%-ն այն կարծիքին է, որ թատերական ինստիտուտը չի պատրաստում բավարար որակի մասնագետներ, իսկ 54%-ը կասկածելի է համարում այս ԲՈՒՀ-ն ավարտած մասնագետների որակը, ապա հարց է ծագում. այնուամենայնիվ, պե՞տք է թատերական ինստիտուտը: Թատրոնի մասնագետների 84%-ը վստահ է, որ կա այս ուսումնական հաստատության անհրաժեշտությունը: Ուրեմն հարկ է ճշտել հարցը: Թատերական արվեստի պետական ինստիտուտն անհրաժեշտ է, բայց ինչպիսի՞ն պետք է լինի:

Պարզենք, թե թատերական արվեստի պետական ինստիտուտի ներկայիս ուսանողներն ինչու՞ են ընտրել այս բարձրագույն ուսումնական հաստատությունը:

Հարցման արդյունքների համաձայն ուսանողների 53%-ը թատերական ինստիտուտ է ընդունվել, որովհետև նպատակ է ունեցել աշխատելու թատրոնում կամ թատրոնի համար:

Ուսանողների 34%-ը ցանկանում է ունենալ թատերական կրթություն: Եվ եթե ուսանողների 12%-ը վստահ չէ իր մասնագիտության ճիշտ ընտրության մեջ, ապա դրանց կեսն ուսման ընթացքում է հիասթափվել ընտրած մասնագիտությունից: Դրանք այն ուսանողներն են, որոնք ցանկություն են ունեցել ստանալ թատերական կրթություն:

Հարցման մասնակիցների 12%-ը խոստովանել է, որ թատերական ինստիտուտ է ընդունվել՝ ունենալով որոշակի այլ պատճառներ: Զարմանալիորեն այսօր այդ ուսանողները համոզված են, որ ճիշտ են ընտրել իրենց մասնագիտությունը,և միայն հինգ մարդուց մեկն է իրեն շփոթված կարծում:

Ուսանողների 1%-ն ընդունվել է թատերական արվեստի ինստիտուտ, որովհետև հարգի է /պրեստիժ է/:

Հարցման մասնակիցների 88%-ը վստահ է իր մասնագիտության ճիշտ ընտրության մեջ: Սակայն ընդամենը 65%-ն է համոզված, որ ստանում է անհրաժեշտ գիտելիքներ լավ մասնագետ լինելու համար: Ուսանողների 35%-ը կարծում է, որ չի ստանում գիտելիքն այն մակարդակով, որ անհրաժեշտ է մասնագետ դառնալու համար: 32%-ը հայտնում է, որ բավարարված չէ դասախոսական կազմի գիտական-մասնագիտական մակարդակով: Դժգոհություն են առաջացնում մասնավորապես ոչ մասնագիտական առարկաների դասավանդումները:

Այն հարցին, թե ո՞ր թատրոնում կնախընտրի աշխատել թատերական արվեստի ինստիտուտի շրջանավարտը, ստացվել են հետևյալ պատասխանները: Կրկին առաջատար է Երևանի դրամատիկական թատրոնը, որտեղ աշխատելու ցանկություն է հայտնել ուսանողների 23%-ը: Փաստորեն, այս թատրոնին նախապատվություն է տալիս ոչ միայն հասարակությունը, այլ նաև՝ ուսանողությունը: 7%-ը ցանկանում է աշխատել ակադեմիական թատրոնում, 4%-ը ռուսական դրամատիկականում: Եթե ուսանողների ընդամենը 1%-ն է ուզում ստեղծագործել Պատանի հանդիսատեսի թատրոնում, ապա 4%-ը նախընտրում է երաժշտական կոմեդիայի թատրոնը: Ուսանողների 30%-ը նախապատվություն է տալիս այլ պրոֆեսիոնալ թատրոններին: Նշվում են մասնավորապես «Համազգայինի» և Մնջախաղի պետական թատրոնները: Ուսանողների 17%-ը խոստովանել է, որ չի ցանկանա կյանքը կապել թատրոնի հետ, այսինքն՝ աշխատել որևէ թատրոնում: Այդ թվում 1%-ը դերասանական, 2%-ը ռեժիսորական և 14%-ը թատերագիտական բաժինների ուսանողներ:

IV

Թատերական քննադատությունը թատերագիտության բաժիններից մեկն է, որի նպատակն է ոչ միայն ներկայացումների վերլուծությունն ու գնահատումը, այլև հասարակական կարծիքի կազմակերպումը: Այն հարցին, թե «ինչպե՞ս եք վերաբերվում թատերական քննադատությանը», հարցման մասնակիցների ընդհանուր թվից 50,75%-ը հայտնում է, որ թատերական քննադատությունը անհրաժեշտ է որպես թատրոնի «բժիշկ»: Հասարակության

50,5%-ն ու թատրոնի մասնագետների 42%-ը, ճանաչելով թատերական քննադատությունը որպես թատրոնի «բժիշկ», փաստորեն, հայտնում են ներկայիս հայ թատրոնի հիվանդ լինելու մասին: Գաղտնիք չէ, որ միայն հիվանդ օրգանիզմին է հարկավոր բժիշկ: Հիվանդության պատճառները պետք է փնտրել և թատրոնի ներսում, և իրենից դուրս: Ուսանողների 60%-ը նույնպես գտնում է, որ թատերական քննադատությունն անհրաժեշտ է բացառապես որպես թատրոնի «բժիշկ»: Թատերական քննադատությունը, լինելով անկախ գիտության՝ թատերագիտության բաժիններից, պետք է գործի նաև որպես անկախ բնագավառ: «Քննադատը պետք է կարծիք հայտնի և պայքարի: Նա պետք է նպատակ ունենա, իմանա՝ ինչի է գնում: Հաջողությունը կամ ձախողումը երկրորդական նշանակություն են ստանում: Քննադատը պետք է կռվի իր գաղափարի համար, զոհաբերի ամեն ինչ հանուն այդ գաղափարի»:[8] Այս կարծիքին համամիտ է հարցման մասնակիցների ընդհանուր թվից 32,5%-ը: «Թատերական քննադատը անկախ մարդ է, որը թատրոն պետք է մտնի ընդհանուր, այլ ոչ ծառայողական մուտքից, և իր գնած տոմսի համաձայն՝ իր տեղը զբաղեցնի հանդիսասրահում»:[9] Հասարակության 31%-ը, թատրոնի մասնագետների 37%-ն ու ուսանողների 31%-ը համաձայն են, որ թատերական քննադատությունը անհրաժեշտ է որպես անկախ բնագավառ:

Հարցման մասնակիցների ընդհանուր թվից 16,75%-ը վստահ է, որ թատերական քննադատությունն անհրաժեշտ չէ: Թատրոնի մասնագետների 21%-ը նույնպես համամիտ է դրան: Բայց հիշենք Աբրահամ Մոլի խոսքը. «Ինչ վերաբերում է հեղինակի հիմնական գաղափարներին, հայացքներին և փիլիսոփայական տեսակետին, ապա հաճախ հենց քննադատն է ընդունակ առանձնացնել գլխավոր հաիերը, որոնք չի նկատում հանդիսատեսը»:[10] Դժվար է համաձայնել, որ թատերական քննադատությունն անհրաժեշտ չէ: Այլ հարց է, որ այսօր դրանով զբաղվում են լրագրողներ, ովքեր «Թատրոնի մասին գրում են նույն պատրաստակամությամբ, ինչպես կգրեին Բորսայի կամ Դատարանի մասին»:[11] «Նախքան կարծիք արտահայտելը, նրանք միշտ հետաքրքրվում են հանդիսատեսի կարծիքով... Հազվադեպ է լինում, որ քննադատը հերքի ծափահարող դահլիճի դատավճիռը, - գրել է

Զոլան և պարզաբանել: - Երբ հասարակությունը ափահարում է չափից ավելի, նշանակում է, որ տվյալ ստեղծագործությունը միջին որակի է և անկենսունակ»:[12] Հաճախ թատերական քննադատին մեղադրում են, թե չի հայտնում կամ չի տպագրում իր կարծիքը: Կրկին անդրադառնանք Զոլային, որն այս դեպքում գրում է. «Բացարձակ անտարբերությունը դա այն վիճակն է, որին քննադատը հասնում է այն ժամանակ, երբ մի քանի տարի սրբազնագործել է... Հետագայում, տեսնելով, որ ոչինչ չի փոխվում, նա հանգստանում է...»:[13] Այսուհանդերձ, հարցման մասնակից հասարակության 18,5%-ն ու ուսանողների 9%-ը կարծում են, որ թատերական քննադատությունը անհրաժեշտ չէ: Հենրիկ Հովհաննիսյանը գրել է. «Թատերական նվիրակարգից դուրս է թատերախոսը՝ թատրոնի անցանկալիորեն հարգված հյուրը»:[14]

* * *

Արդի հայ թատերական կյանքի հետազոտումը պարզեց, որ այսօր կասկածելի է թատերական արվեստի անհրաժեշտությունը: Թատրոնը հասարակական կյանքում դեր չունի և չի կատարում որևէ ֆունկցիա: Անվիճելի է, որ «հասարակական միջավայրն է ստեղծում թատրոնի դեմքը, որոշում նրա իմաստն ու նպատակը»:[15] Թատրոնը հասարակական գիտակցության ձև է: Մեր պայմաններում նրա հեռանկարը կասկածելի է երևում, որովհետև չկա ամուր հասարակական հող:

Հայ իրականության մեջ 20-րդ դարավերջում իշխանությունների տեսադաշտից դուրս է մնացել մշակույթը: Թատերական արվեստը դարձել է ինքնանպատակ, իսկ ստեղծագործողները ապրում և աշխատում են անհնարին պայմաններում: Այս ամենի պատճառը պետք է փնտրել ոչ թե թատրոնական համակարգում, այլ հասարակության շրջանակներում: Ըստ Հենրիկ Հովհաննիսյանի «թատրոնն իր իդեալական վիճակով ժամանակի հոգևոր խորհրդարանն է, հասարակական առաջադիմության չափանիշը»:[16] Թատրոնի տեղը հասարակական կյանքում ու կապը ժամանակի հետ նախ և առաջ պայմանավորվում է հասարակության հոգևոր-բարոյական պահանջներով: Բայց ինչպիսի՞ն են մեր հոգևոր-բարոյական պահանջները: Սոցիոլոգները նշում են, որ մշակույթի առաջադիմությունը սոցիալ-

տնտեսական առաջադիմության արդյունք է:[17] Մեր հասարակության ներկայիս սոցիալ-դասային կառուցվածքի քայքայման պայմաններում անհնար է որևէ առաջընթաց: Քաղաքական անկայուն իրավիճակը, սոցիալ-տնտեսական ճգնաժամը, սոցիալական ծանր կացությունը պատճառ են հանդիսանում հասարակության հոգևոր-բարոյական պահանջների անկման:

Հաջորդ կարևոր հանգամանքն, անկասկած, կրթական համակարգի ցածր մակարդակն է: Երբ ասում ենք, թե թատրոնն անհրաժեշտ չէ, չի նշանակում, որ դեմ ենք թատերական արվեստին: Պարզապես, արդի հայ հասարակական կյանքում այն պահանջված չէ: Դատելով մեր հետազոտման արդյունքներից՝ հասարակությունը, կարծես, չի ընդունում այդ փաստը: Սակայն կյանքն ապացուցում է հակառակը: Հասարակությունն անտարբեր է, նա չի հետաքրքրվում թատրոնով:

Հայ ժողովուրդը, որ դարեր շարունակ ապրել և աշխատել է ծանր պայմաններում, միշտ ստեղծել է մշակութային արժեքներ: Մենք չենք կարող և չպիտի հրաժարվենք բարձր գաղափարներից, մեր լեզվից, կրոնից, մշակույթից: Հանգամանքների բերումով այսօր զրկված ենք ստեղծագործելու հնարավորությունից, առավել ևս, երբ խոսքը թատերական արվեստի մասին է, որը հասարակական մշակութային երևույթ է:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

[1] М.Волошин, Лики творчества, изд. §Наука:, Ленинград, 1988, стр. 113.
[2] А.Банфи, Философия искусства, изд. "Искусство", М., 1989, стр. 129.
[3] М.Волошин, նույն տեղում, стр.112.
[4] М.Волошин, նույն տեղում, стр.114.
[5] Հ.Հովհաննիսյան, նույն տեղում, էջ 5:
[6] М.Волошин, նույն տեղում, стр.114.
[7] տես. "Голос Армении", N118, 14 октября 1999 год.
[8] Э.Золя, նույն տեղում, стр. 52.
[9] Հ.Հովհաննիսյան, դասախոսությունից:
[10] А. Моль, նույն տեղում, стр. 258.
[11] Э. Золя, նույն տեղում, стр. 50.
[12] Э. Золя, նույն տեղում, стр. 51, 54.
[13] Э. Золя, նույն տեղում, стр. 48.
[14] Հ.Հովհաննիսյան, «Հայ թատրոնի պատմություն. XIX դ.», Երևան, 1996, էջ 6:
[15] Հ.Հովհաննիսյան, նույն տեղում, էջ 6:
[16] Հ.Հովհաննիսյան, նույն տեղում, էջ 6:
[17] տես. "Социология", под рук. Г.В. Осипова, изд., Москва, 1990, стр. 81